

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «Յունիբանկ» ԲԲԸ նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման, օրենսդրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ**

05.01.2022թ. ԹԻՎ1/03ԲԳ-Ա

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումների համար Բանկի նկատմամբ կիրառել տուգանք՝ **1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ** գումարի չափով, ինչպես նաև **նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումները բացառելու հանձնարարականով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՅԱՆ